

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Նանման ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊԶԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	Նանման ՍՊԸ	Նանման ՍՊԸ	Բաճկոն՝ ձմեռային, ամենօրյա կանացի Բաղկացած է անջրանցիկ բաճկոնից և բաճկոնի վրա ինքնակաշուկներով ամրացված տարբերանշաններից և գրվածքներից: Բաճկոնը արտադրվում է 100% պոլիէսթեր, 260 գ/մ2 բաղադրությամբ, անջրանցիկ մուգ կանաչավուն երանգի (ըստ նմուշի) կտորից : Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման, թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնը՝ հետծավվող օձիքով է, որին 7 հատ 13-14 մմ - անոց կոճակներով ամրացված է հանովի դնովի մորթե օձիքը (ըստ նմուշի): Այն կարված է արհեստական մորթուց՝ 1200-1300 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ մուգ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը 11-13մմ: Ունի օձիքի ներսամասում կարված օղակաձև կախիչ: Բաճկոնի առաջամասը և թիկունքամասը մշակված է 300 գրամ մակերեսային խտությամբ սինտետայոնե տաք ներդիրով, որը մզոկարված է

քամիապաշտպան շերտով, իսկ թևքերը՝ 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը նույնպես, մզակարված է քամիապաշտպան շերտով: Բաճկոնի ներսի մասը, ներառյալ թևերը, ամբողջությամբ աստառապատ է: Աստառը՝ կանաչավուն գույնի 90 գ/մ² գործվածքից, բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Թիկունքը վերին կտրվածքով, կոկետկայով, կոկետկայի եզրից ներքև՝ երկայնական կտրվածքով: Բաճկոնի փեշերի ներքին եզրերը մշակված են 2.0-2.5 սմ լայնության զարդակարով: Կոճկվում է կենտրոնական կանաչ գույնի պլաստմասե շղթայական կոճկվածքով՝ մեկ կամ երկու գլխիկանի № 6 կայծակ շղթայով: Շղթայի եզրերը միմյանց ամրանում են բաճկոնի ստորին եզրից 5-6սմ վերևից և ձգվում մինչև կրծքամասի գրպանների կափույրի ստորին եզրը: Շղթայի վրայից, ստորին եզրից մինչև օձիքի եզրը, երկայնակի անցնում է 5.5-6.0 սմ լայնությամբ փակ կափույրը (հաստացված), որը կայծակ շղթայի վրայից՝ ստորին եզրից սկսած, կոճկվում է 4 հատ հավասարաչափ հեռավորություններով տեղադրված, մետաղական կոճգամներով և մեկ կոճգամ ամրացնում է օձիքը :

Կոճգամների գլխիկները կոճկված վիճակում չեն երևում: Կողային թեք գրպանների վերին եզրից դեպի վերև 1.5-2.5 սմ հեռավորության վրա մշակվում է փակ տեսակի կարգավորվող սև կամ պաշտպանական գույնի, 0.5-0,6սմ տրամագծով էլաստիկ քուղ՝ պլաստմասե սեղմակ կարգավորիչներով: Կրծքամասի աջ և ձախ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն՝ կախված չափսերից 15-16 սմ լայնության և 16-18 սմ երկարության մեկական գրպաններ, որոնց 3.8-4.2 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողքերից փակ, կոճկվում են 2.5×12.5 սմ չափսի մուգ կանաչ երանգի կաշուն ժապավեններով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված, ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով՝ 2.0-2.5 սմ լայնությամբ շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի պլաստմասե № 4 կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից՝ ձախ կրծքամասի

հատվածում, երեսացու կտորով մշակված է 12սմ*16սմ չափսի կոճակով կոճկվող վրադիր ծոցագրպան: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսերի կանաչ գույնի կաշուն ժապավեններ՝ ՀՀ ԱԱԾ և գորատեսակի կամ ստորաբաժանման անվամբ գրվածքները, ինքնակաշունով փակցման համար: Ուսադիրների շրջանում՝ յուրաքանչյուր ուսին, մշակվում են 14,5-15,5սմ երկարությամբ և 4,3 սմ լայնքով 14մմ-անոց կոճակով և օղակով կոճկվող , նույն կտորից պատրաստված, երկշերտ ախլակային ուսադիրներ, որոնք միջնամասում անցնում են ֆիքսատոր օղակի միջով: Բաճկոնի թևքերի եզրերը՝ 2,0սմ յայնքով, զարդակարված են և ներսից ունեն 6,5-7,0սմ լայնքով ներկարված մուգ կանաչ գույնի, երկշերտ գործած մանժետներ: Աջ և ձախ թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված մուգ կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպածև տեսքով 7.0×9.0 սմ չափսի ինքնակաշուններ: Ինքնակաշունով ամրացող տարբերանշաններն են՝ սեպածև թևքանշան ՀՀ զինանշան՝ Հայաստանի Հանրապետություն գրվածքով, սեպածև թևքանշան ՀՀ ԱԱԾ տարբերանշանը, կրծքին փակցնելու համար ասեղնագործ ինքնակաշուններով գրվածքներ՝ ՀՀ ԱԱԾ և ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՉՈՐՔԵՐ: Տարբերանշանների քանակները, ըստ տեսակների, կտրամադրվեն Պատվիրատույի կողմից, հաստատման նմուշների հաստատումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, պայմանագրի ծածկագիրը և խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը: Բաճկոնի շղթայի գլխիկից պետք է կախված լինի չափս-հասակային թղթյա ստուգիչ պիտակ՝ վրան նշված տեսականու չափսը,

		արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար՝ Պատվիրատույի պահանջի դեպքում, մատակարար կազմակերպությունը, պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացու գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության, սինտեպոնի, աստառի մակերեսային խտության և այլ օգտագործված նյութերի վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, յուրաքանչյուրը պոլիէթիլենային թափանցիկ պարկով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը :
--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Նախնական ՍՊԸ-ն որպես մասնակցի մասնակցությունը էլեկտրոնային աուկցիոնի շրջանակներում՝ կոդով ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱԶԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ներքև ներկայացված է առկա առարկայի մանրամասն նկարագրությունը:

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
5			